ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 փետրվարի 2020 թվականի N 25–Ա

ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի ԹԻՎ 73-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1180-Ն որոշման 30-րդ, 33-րդ և 34-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 13-ի N 1532-Ն որոշմամբ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթով, ***որոշում եմ.***

1.Ստեղծել՝

1) համայնքի տարահանման հանձնաժողով, հանձնաժողովի նախագահ նշանակել համայնքի ղեկավարի տեղակալին և հանձնաժողովի կազմը համալրել համայնքապետարանի աշխատակազմից,

2) քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ՝

ա. կապի ՝ 11/33 անձնակազմով, հրամանատար՝ Գ. Համբարձումյան,

բ. ինժեներական՝ 11/33 անձնակազմով, հրամանատար՝ Մ. Թորոսյան,

գ. բժշկական՝ 11/33 անձնակազմով, հրամանատար՝ Հ. Գրիգորյան,

դ. մեքենայացված՝ 11/33 անձնակազմով, հրամանատար՝ Տ. Սանոսյան ,

ե. անհատական պաշտպանության միջոցների բաշխման և հասարակական սննդի մատակարարման ՝ 11/33 անձնակազմով, հրամանատար՝ Գ. Հովհաննիսյան,

զ. գյուղատնտեսական կենդանիների, բույսերի և անտառների պաշտպանության՝ 11/33 անձնակազմով, հրամանատար՝ Գ. Գաբրիելյան,

է. հասարակական կարգի պահպանման՝ 11/33 անձնակազմով, հրամանատար՝ Ա. Առաքելյան,

ը. փրկարարական՝ 11/33 անձնակազմով, հրամանատար՝ Կ. Մովսիսյան,

թ. հակահրդեհային՝ 11/33 անձնակազմով, հրամանատար՝ Մ. Երանոսյան,

ժ. հետախուզական՝ 11/33 անձնակազմով, հրամանատար՝ Ս. Նահապետյան:

2.Հաստատել՝

համայնքի Աշոցք, Բավրա, Սարագյուղ, Թավշուտ, Սիզավետ, Ղազանչի, Մեծ Սեպասար, Փոքր Սեպասար, Կրասար, Ջույգաղբյուր, Կարմրավան բնակավայրերում կազմավորումների և անձնակազմերի ցանկը՝ համաձայն հավելվածի:

3.Հանձնարարել՝

1) տարահանման հանձնաժողովի նախագահին՝

ա. քաղաքացիական պաշտպանության կազմավորումները համալրել անձնակազմով և համապատասխան գույքով,

բ. կազմակերպել և իրականացնել համայնքի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի, կազմավորումների անձնակազմի ուսուցումը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուբվարի 22-ի. թիվ 46-Ն որոշման,

գ. կազմել և յուրաքանչյուր տարի մինչև փետրվարի 10-ը հունվարի 1-ի դրությամբ ճշտել համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի թիվ 633-Ն որոշման:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2019 թվականի փետրվարի 1-ի «Աշոցք համայնքում տարահանման հանձնաժողով և քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ ստեղծելու մասին» N25-Ա որոշումը:

4.Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել ըստ պատկանելիության:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը իրականացնում եմ անձամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020 թվականի փետրվարի 1
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 փետրվարի 2020 թվականի N 26–Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 4-Ի ԹԻՎ 75-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի գ) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, և ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի N 633-Ն որոշման 4-րդ կետի ե) և 6-րդ կետի է) ենթակետերի պահանջների՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Համայնքի հիմնական ցուցանիշները քաղաքացիական պաշտպանության վիճակի՝ համաձայն N2 հավելվածի,

3) Համայնքի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի կառավարման, կապի և ազդարարման սխեման՝ համաձայն N 3 հավելվածի,

4) Համայնքի բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովման հաշվարկը՝ համաձայն N 4 հավելվածի,

5) Համայնքի բնակչության պատսպարման հաշվարկը՝ համաձայն N 5 հավելվածի,

6) Համայնքի բնակչության տարահանման հաշվարկը՝ համաձայն N 6 հավելվածի,

7) Համայնքի տարահանված բնակչության և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների անձնակազմի սննդամթերքով ապահովման հաշվարկը՝ համաձայն N7 հավելվածի,

8) Համայնքի տարահանված բնակչության անհրաժեշտ հագուստի և առաջին անհրաժեշտության ապրանքների ապահովման հաշվարկը՝ համաձայն N 8 հավելվածի,

9) Համայնքի ինժեներական ապահովման տեխնիկայի և տրանսպորտային միջոցների հաշվարկը՝ համաձայն N 9 հավելվածի,

10) Համայնքի քաղաքացիական պաշտպանության ուժերի և միջոցների հաշվարկը՝ համաձայն N 10 հավելվածի:

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2019 թվականի ապրիլի 4-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը հաստատելու մասին» N75-Ա որոշումը:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Խաչատրյանին՝ Աշոցք համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանի մեկ օրինակը տրամադրել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020 թվականի փետրվարի 1
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 փետրվարի 2020 թվականի N 27 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԱՇՈՑՔ, 7-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ 1003,06 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք Համայնք, գյուղ Աշոցք, 7-րդ փողոց, թիվ 7 հասցեում գտնվող բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, որի նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերը և այն փաստացի տիրապետում և օգտագործում է Աշոցք գյուղի բնակիչ Ռոզա Բորբորյանը:

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերի չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ N 1328-Ն որոշման 1-ին կետով, հաշվի առնելով, որ բնակելի տունը և բնակելի օժանդակ շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ և հիմք ընդունելով քաղաքացի Ռոզա Բորբորյանի 2020 թվականի հունվարի 26-ի դիմումը՝ Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 7-րդ փողոց, թիվ 7 հասցեում գտնվող բնակելի տան և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված 1003,06 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու մասին,

որոշում եմ.

1. Վերականգնել իրավական հիմքերը և օրենքի ուժով ճանաչել քաղաքացի Ռոզա Աշոտի Բորբորյանի /ծնված՝ 1956 թվականի դեկտեմբերի 28-ին/ սեփականության իրավունքը Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 7-րդ փողոց, բնակելի տուն 7 հասցեում գտնվող 08-015-0047-0001 կադաստրային ծածկագրով 1000 քառակուսի մետր

մակերեսով հողամասի և նրա վրա 1970 թվականին կառուցված բնակելի տան նկատմանբ

2. Հատակագծով առանձնացված 3,06 քառակուսի մետր ավել հողամասը ուղղակի վաճառքի միջոցով 3,06 քառակուսի մետր X 144 դրամ=440 (չորս հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել քաղաքացի Ռոզա, Բորբորյանին: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

3. Ինքնակամ կառուցված 5.36 քառակուսի մետր մատուռի համար հետագայում կանդրադարձվի առանձին որոշմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020 թվականի փետրվարի 3
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 փետրվարի 2020 թվականի N 28 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի N 89-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նոյեմբերի 20-ի <<Գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին>> N Կ-20112019-08-0034 որոշումը **որոշում եմ**.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2019 թվականի ապրիլի 23-ի <<Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 1-ին փակուղի, թիվ 1 հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող, 08-015-039-004 կադաստրային ծածկագրով հողամասում Հայաստանի Հանրապետության ոստիկանության Աշոցքի բաժնի վարչական շենքի կառուցման և սպասարկման տարածքում իրականացված ինքնակամ կառույցն օրինականացնելու մասին>> N 89-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020 թվական.փետրվարի 11

գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 փետրվարի 2020 թվականի N 29 - Ա

ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԱՇՈՑՔ, 1-ԻՆ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ, ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, 08-015-039-004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇՈՑՔԻ ԲԱԺՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՑԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ՄԵԿ ԴՈՒՌԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ ԵՐԿՈՒ ԴՌՆԵՐԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆԸ ՕՐԻԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածովի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 2-րդ բաժնի դրույթներով որոշում եմ.

1. Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 1-ին փողոց, 1-ին փակուղի, թիվ 1 հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող, 08-015-039-004 կադաստրային ծածկագրով հողամասում Հայաստանի Հանրապետության ոստիկանության Աշոցքի բաժնի վարչական շենքի կառուցման և սպասարկման տարածքում իրականացված ինքնակամ կառույցը, ինքնակամ բացված մեկ դուռը, ինքնակամ փակված երկու դռները և ինքնակամ փակված մեկ պատուհանը ճանաչել օրինական որպես Հայաստանի Հանրապետության սեփականություն:
2. Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները եւ օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
3. Շինությունը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով եւ չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020 թվական փետրվարի 11
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245) 2-14-82,
էլ. փոստ՝ E-mail: ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 փետրվարի 2020 թվականի N 30-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասով և «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, ***որոշում եմ***.

1. 2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի անցկացման նպատակով Աշոցք համայնքի բնակավայրերում սահմանել հետևյալ տեղամասային կենտրոնները.

1) Սարագյուղ գյուղի հիմնական դպրոցի շենք, հասցե՝ գյուղ Սարագյուղ, 2-րդ փողոց, թիվ 24,
2) Բավրա գյուղի միջնակարգ դպրոցի շենք, հասցե՝ գյուղ Բավրա, 3-րդ փողոց, 2 փակուղի, թիվ 1,
3) Թավշուտ գյուղի միջնակարգ դպրոցի շենք, հասցե՝ գյուղ Թավշուտ, 2-րդ փողոց, թիվ 2,
4) Սիզավետ գյուղի միջնակարգ դպրոցի շենք, հասցե՝ գյուղ Սիզավետ, 3-րդ փողոց, թիվ 4,
5) Ղազանչի գյուղի միջնակարգ դպրոցի շենք, հասցե՝ գյուղ Ղազանչի, 8-րդ փողոց, թիվ 12,
6) Մեծ Սեպասար գյուղի միջնակարգ դպրոցի շենք, հասցե՝ գյուղ Մեծ Սեպասար, 9-րդ փողոց, թիվ 1,
7) Փոքր Սեպասար գյուղի տարրական դպրոցի շենք, հասցե՝ գյուղ Փոքր Սեպասար, 1-ին փողոց, թիվ 41,
8) Կրասար գյուղի միջնակարգ դպրոցի շենք, հասցե՝ գյուղ Կրասար, 1-ին փողոց, թիվ 16/1,
9) Աշոցք գյուղի հանդիսությունների սրահի շենք, հասցե՝ գյուղ Աշոցք, 3-րդ փողոց, թիվ 2,

10) Աշոցք գյուղի միջնակարգ դպրոցի շենք, հասցե՝ գյուղ Աշոցք, Վ. Ռուդակովի փողոց, թիվ 1,
11) Զույգաղբյուր գյուղի միջնակարգ դպրոցի շենք, հասցե՝ գյուղ Զույգաղբյուր, 6-րդ փողոց, թիվ 2,
12) Կարմրավան գյուղի հիմնական դպրոցի շենք, հասցե՝ գյուղ Կարմրավան, 1-ին փողոց, թիվ 8:

2. Տեղեկացման նպատակով սույն որոշումը ուղարկել լիազոր մարմնին, թիվ 30 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնների տարածքները տիրապետողներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020 թվականի փետրվարի 11

գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 փետրվարի 2020 թվականի N 31 - Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՕՖԵԼՅԱ ԶԱՎԵՆԻ ԱՄԻՐՅԱՆԻՆ, ԳԵՎՈՐԳ ՍԱՄՎԵԼԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ, ՀԱՄԼԵՏ ՍԱՄՎԵԼԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԵՎ ՆԱՐԵ ՍԱՄՎԵԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-058-0003-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով, 48-րդ կետերով և հիմք ընդունելով քաղաքացի Օֆելյա Զավենի Ամիրյանի 2020 թվականի փետրվարի 11-ի Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը, **որոշում եմ**.

քաղաքացիներ Օֆելյա Զավենի Ամիրյանին, Գևորգ Սամվելի Գևորգյանին, Համլետ Սամվելի Գևորգյանին և Նարե Սամվելի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող, Շիրակի մարզ, գյուղ Կրասար, 14-րդ փողոց, 19 հողամաս հասցեում գտնվող 08-058-0003-0005 կադաստրային ծածկագրով հողամասին/վկայական՝ N 23062016-08-0025/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետութուն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Կրասար, 14-րդ փողոց, թիվ 19:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020 թվական փետրվարի 11
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2020 թվականի N 32 - Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՂԱԹԵԼ ՄԵՐՈՒԺԱՆԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-041-0001-0037 ԵՎ 08-041-0001-0038 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀԱՐԱԿԻՑ ԱՆԱՍՆԱԳՈՄԵՐԻՆ ՄԵԿ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով, 48-րդ կետերով և հիմք ընդունելով քաղաքացի Սաղաթել Մերուժանի Մուրադյանի 2020 թվականի փետրվարի 11-ի Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը, **որոշում եմ**.

քաղաքացի Սաղաթել Մերուժանի Մուրադյանին սեփականության իրավունքով պատկանող, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Թավշուտ, 2-րդ փողոց, 27/4 անասնագոմ հասցեում գտնվող 08-041-0001-0037 անասնագոմին /վկայական՝ N 18062019-08-0004/ և հարակից Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Թավշուտ, 2-րդ փողոց, 27/5 անասնագոմ հասցեում գտնվող 08-041-0001-0038 անասնագոմին /վկայական՝ N 18062109-08-0007/ տալ մեկ միասնական հասցե՝ Հայաստանի Հանրապետութուն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Թավշուտ, 2-րդ փողոց, թիվ 24/4:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020 թվականի փետրվարի 12
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2020 թվականի N 33 - Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՒԶԱՆՆԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԱՎԱԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՍՐԱՀԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով, 48-րդ կետերով և հիմք ընդունելով լիազորված անձ Վահագն Անդրանիկի Առաքելյանի 2020 թվականի փետրվարի 11-ի Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը, **որոշում եմ**.

քաղաքացի Ռուզաննա Սերյոժայի Ավալյանին սեփականության իրավունքով պատկանող, գյուղ Աշոցք, 9-րդ փողոց, թիվ 1 հասցեում գտնվող առևտրի և սպասարկման սրահին /գրանցված՝ 2006 թվականի հունվարի 28-ին, վկայական N2008286/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 9-րդ փողոց, թիվ 1:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020 թվականի փետրվարի 11
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2020 թվականի N 34 - Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՄԵՍՐՈՊ ՍԱՄՍՈՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ, ԱՆԱՀԻՏ ՄԵՍՐՈՊԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ, ՍԵՐՎԵՆԻԿ ՄԵՍՐՈՊԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ, ԱՐԹՈՒՐ ՄԵՍՐՈՊԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԵՎ ՍԵԴԱ ՍՏԵՓԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-015-020-019 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 291-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով, 48-րդ կետերով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հունվարի 14-ի <<Գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին>> Ռ Կ-14012020-08-0043 որոշումը և հիմք ընդունելով քաղաքացի Մեսրոպ Պետրոսյանի 2020 թվականի փետրվարի 11-ի Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը, **որոշում եմ**.

1. քաղաքացիններ Մեսրոպ Սամսոնի Պետրոսյանին, Անահիտ Մեսրոպի Պետրոսյանին, Սերվենիկ Մեսրոպի Պետրոսյանին, Արթուր Մեսրոպի Պետրոսյանին և Սեդա Ստեփանի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող, գյուղ Ղազանչի, 2-րդ փողոց, բնակելի տուն 4 հասցեում գտնվող 08-075-0015-0001 կադաստրային ծածկագրով բնակելի տանը տալ հասցե՝ Հայաստանի հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Ղազանչի, 2-րդ փողոց, բնակելի տուն 4:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք, գյուղ Ղազանչի, 2-րդ փողոց, թիվ 4 հասցեում գտնվող բնակելի տան և նրա

պահպանման ու սպասարկման համար նախատեսված 0.1 հեկտար մակերեսով հողամասի կարգավիճակի և անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին >> N 291-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020 թվականի փետրվարի 11
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245) 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2020 թվականի N 35-Ա

ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈՂՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ (ԱՆՎՃԱՐ) ՏԵՂԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ և 18-րդ հոդվածի 6-րդ մասերով , ***որոշում եմ***.

1. 2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեին Աշոցք համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար հատուկ (անվճար) տեղեր հատկացնել համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը իրականացնում եմ անձամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020 թվականի փետրվարի 12
գյուղ Աշոցք

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Աշոցք համայնքի ղեկավարի 2020 թվականի
փետրվարի 12-ի N 35-Ա որոշման

2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵԻՆ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀԱՏՈՒԿ (ԱՆՎՃԱՐ) ՏԵՂԵՐ

h/h	Հասցե	Մակերես (քմ)
1.	գյուղ Աշոցք, Հրապարակ 2	20
2.	գյուղ Բավրա, 6-րդ փողոց, 1 փակուղի, թիվ 1	15
3.	գյուղ Սարագյուղ, 1-ին փողոց, թիվ 11	15
4.	գյուղ Սիզավետ, 1-ին փողոց, թիվ 4	15
5.	գյուղ Թավշուտ, 2-րդ փողոց, 2-րդ անցուղի, թիվ 6	15
6.	գյուղ Ղազանչի, 1-ին փողոց, թիվ 10	20
7.	գյուղ Մեծ Սեպասար, 1-ին փողոց, թիվ 23	20
8.	գյուղ Փոքր Սեպասար, 1-ին փողոց, թիվ 24	15
9.	գյուղ Կրասար, 8-րդ փողոց, թիվ 12	15
10.	գյուղ Զույգաղբյուր, 2-րդ փողոց, թիվ 7	15
11.	գյուղ Կարմրավան, 1-ին փողոց, թիվ 20	15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2020 թվականի N 36-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՔԱՋԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 64-Ն որոշման հավելված 1-ի 7-րդ կետի 1-ին, 2-րդ ենթակետերի «բ», «դ» պարբերության, ***որոշում եմ.***

Անհատ ձեռնարկատեր Քաջիկ Գրիգորյանին (ՀՎՀՀ՝ 57229053, պետական ռեգիստրի գրանցման համարը՝ 63.00131/2002-06-28, իրավաբանական հասցեն՝ գյուղ Ղազանչի 2 փողոց, 8) 2020 թվականի առաջին եռամսյակի համար տալ ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն թվով երկու առևտրական օբյեկտների համար (40 քառակուսի մետր և 140 քառակուսի մետր մակերեսներով):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020 թվականի փետրվարի 12
գյուղ Աշոցք